

Թիւ 28826
Օգոստոս 81, 1988

Արժանաշնորհ

Տ. Տիրան Քնյա. Փափազեան
Հովհան Ս. Գրիգոր Նարեկացի Ակեղեցւոյ
Գլխավունա.

Միքայելի Տէր Տիրան,

Ստացած ենք Օգոստոս 26, 1988 թուակիր մեր նամակը, ուր արծարձը-
ւած զոյզ հարցերու մասին հետեւալ կարգադրութիւնները կը տեղեկաց-
նենք մեզի:

Սեպտեմբեր 18ին, մեր քահանայական ծեռնադրութեան 25-ամեակին տո-
թիւ, Տ. Զարեզին Քնյա. Զասպարեան կրնայ ներկայ ըլլալ եւ մասնակցիւ
հանդիսութեան: Առաջնորդի Փոխանորդ Տ. Ցուսիկ օ. Վոդ. Պաղտասեան նը-
շանակած է եկեղեցական մը՝ որպէս զի նոյն օրը Ուեսթչէսթըրի Ս. Յակոբ
Սկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցանէ:


Իսկ եկեղեցւոյդ 20-ամեակի աօնակատարութեան, 1984 Ապրիլ 15, կա-
րելի է միացնել նահանակաց ոգեկոչման հանդիսութիւնը՝ ունենալով Հ.Բ.
Հ. Միութեան տեղական մասնանդիւդի մասնակցութիւնը:

Բարի եղէք ոգեկոչման հանդիսութեան եւ մեր այցելութեան կապակցու-
թեամբ մեր եւ ծրական հարհուրդիդ կարգադրութիւնները մեզի տեղեկացնել
ժամանակին:

Միքայ Աղջունի

ԹԱՐԳԱԿԱ ԱՐՔԵԳԻՍԿՈՎՈՒ
Սպաշնորդ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
Գլիվլենտ, Օհայո



ST. GREGORY OF NAREK
ARMENIAN CHURCH

REV. FR. DIRAN PAPAZIAN
PASTOR

Area Code 216—Tel. 381-6590

666 Richmond Road
Cleveland, Ohio 44143, U.S.A.

26 Օգոստ. 1983

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Առաջնորդ,
Առաջնորդաբան Հայոց,
ի Նիւ Եղբակ, Ն.Ե.,

Գեր. Եւ Սիրելի Սրբազն Հայր,

Սոյն համակը կը գրուի Երկու հարցերու առնչութեամբ։ Առաջինը կը Վերաբերի իմ Քսանեւհինգամեակիս որ Հանդերձեալ է կատարուիլ յառաջիկայ ամիս, 18 Մայտեմբեր, 1983-ին, իսկ Երկրորդը կը Վերաբերի Քլիվլենտի Ս. Գրիգոր Խարեկացի Հայոց Եկեղեցւոյս Քսանամեակին որ ծրագրուած է տօնակատարել յառաջիկայ տարի, 15 Ապրիլ, 1984-ին, Ծաղկազարդի օրը, Զերդ Սրբազնութեան հայագահութեամբ։

Իմ Քսանեւհինգամեակիս Վերաբերեալ Հետեւեալ հարցը ծագեցաւ։ Ինչպէս կը յիշէք ձեր թելադրութեամբ Տիրան Սրբազնին դիմած էի որ սկիզբէն համամտւթիւն յայտնած էր ներկայ ըլլալու իմ տօնակատարութեանս, սակայն այնպիս կը թուի որ անձնապէս պիտի չի կրնայ ներկայ ըլլալ, ինչպէս պարզը ւեցաւ մեր Վերջին հեռածայնային խօսակցութենէն, եւ ի վոխարէն ղրկեց իր Ողջոյնի Գրը։ Արդ, որպէս զի ինձմէ ի զատ նաև ներկրորդ Հոգեւորական մը ներկայ ըլլայ այդ օրը եւ ես բոլորովին առանձին չմնամ, պարտաւորութելով՝ թէ վեսան եւ թէ հարսը ինքս ըլլալու։ Ինչպէս կ'ըսեն ժողովը ղական բացատրութեամբ, Տէր Գարեգին Գասպարեանին հետ խօսեցայ, իր տրամադրութիւնները շօշափելու եւ ի պահանջել հարկին զինքը ու վենալու մեզի հետ այդ օրը։ Անշուշտ այս պարագային որպէս զի հանգամանք մը ներկայացնէ Տէր Գարեգին, իր անձէն զատ նաև հարկ է որ ձեզ ներկայացնէ, եւ իբրև ւթեական խորհուրդի անդամ, կարծեմ թէ այդ գործը լաւապէս կրնայ կատարել եթէ զուրք համաձայնիք այս կարգադրութեան։ Տ. Գարեգնի պարագային միակ խոչնդութը այն է որ իր բացակայութեան իր ծուխին մէջ զինքը փոխարինող մը պէտք է ըլլայ Կիրակի օրուան պատարագին համար։ Տրամադրելի Եկեղեցական-ներն են Արշէն Վարդ, Արտէն Աւ. Քինյ. եւ մէյ մըն ալ Տ. Վարդան Ճանկիւլեան անունով բահանայ մը կայ եղեր։ Տրամադրելով որ իմ 25-ամեակս Զեր եւ Առաջնորդաբանի Վերին Հովանաւորութիւնը կը վայելէ, կրնայինք ուրեմն խնդրել ձերդ Սրբազնութենէն որ զուրք հարկ եղածը տնօրինէիք այս հարցի բարւօք լուծման մէջ։ Ես այստեղ հարցը ներկայացնուած եմ Տօնակատարութեան յանձնախումբին եւ Յանձնախումբի անդամները սիրով ընդառաջանած են իմ ներկայացնուած սոյն առաջարկիս։

Իսկ Երկրորդ հարցը, ինչպէս յիշեցի Վերեւ, կը Վերաբերի Եկեղեցւոյս 20-ամեակի տօնակատարութեան։ Տրուած ըլլալով որ յառաջիկայ տարի, 15 Ապրիլ, 1984-ին, ծրագրուած է տօնակատարութիւնը ունենալ Եկեղեցւոյս Քսանամեակին, Ծխական խորհուրդս գործնականապէս յարմար նկատեց որ այդ օրուան տօնակատարութեան միացուի նաև Ապրիլյան Եղեռնի Հայ Դատակաց Յուշտօնը, այլապէս Ծխական խորհուրդս կը խորհի որ դժուարութեանց պիտի Հանդիպի եւ պիտի չկը այս պէտք եղած յաջողութիւնը ապահովել, երեք յաջորդական կիրակիններու երեք մեծ ձեռնարկներ ունենալու պարտադրութելով, այսինքն Եկեղեցւոյս Քսանամեակ եւ Ծաղկազարդ Ապրիլ 15, Ս. Զատիկ Ապրիլ 22 եւ Հայ Դատա-

Հարունակութիւն...

Նար ...

տակաց Յիշատակութեան Օր Ապրիլ 29 (Ապրիլ 24): Ուրեմն Հայ Նահատակաց Օրը Միացնելով Եկեղեցւոյս Քսանամեակին, չափով մը գէթ այս դժուարութիւնը հարթուած կ'ըլլայ՝ կը խորհին՝ մեր Ծխական Խորհուրդի անդամները։ Սա ալ աւելցնելու ենք ի գիտութիւն ձեզի որ, հոս Քլիվլենտի մէջ տարիներէ ի վեր հաստատուած սովորութեան մը համաձայն Հայ Նահատակաց Օրուան՝ Տօնակատարութեան նախաձեռնութեան մէջ եկեղեցւոյս բաժնեկից է նաև Հ.Բ.Ը.Մ.եան տեղւոյս Բարեգործականի մասնաճիւղը։ Ըստ այսմ ուրեմն Քսանամեակի Տօնակատարութեան առիթով Հայ Նահատակաց Յիշատակութեան բաժնին մէջ Հ.Բ.Ը.Մ.եան մասնակցութիւնը եւս պիտի ապահովուի։

Ծխական Խորհուրդս կը յուսայ որ դուք առարկութիւն մը չէ՞ ունենար տեղական բնոյթ ունեցող այս կարգադրութեանց համար։

Մնամք Համբութիւ Զեր Ս. Ա. Հոյն,

Խոնարհաբար,

Աղօթակից՝

ՀՀ. Ա. Հոյն
Տ. Տիրան ՔՀՆ. Փափագեան,
Հովհաննես

Թիւ 28521
Մարտ 7, 1984

Արժանաշնորհ

Տ. Տիրան Ա. ՔԻՆՅ. Զափազեան
Հովհան Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Գլուխնա.

Սիրելի Տէր Տիրան,

Սահած ենք Փետրուար 28, 1984 թուակիր մեր նամակը, որով մեր
Նկատողութեան կը յանձնէք կարգ մը հարցեր՝ Գլուխնա համայնքին
տալիք մեր այցելութեան կապակցութեամբ:

Անորնեւ կու առնք պատասխանները ներ տուած չորս հարցումներուն.

1. Ուրբաթ Ապրիլ 16ին կարելի է ձկնեղէն պատրաստել.
2. Ծարբաթ Ապրիլ 14ին եւս կարելի է ձկնեղէն պատրաստել.
3. Կիրակի Ապրիլ 15ին՝ Ա. Պատարագի ընթացքին Ա. Հաղորդութիւն
կարելի է մասակարարել, իսկ նաշկերոյթին՝ թոշնազգի հրամցնել.
4. Եթե կարգադրութիւն ըլլայ՝ ճայնասփրւուն եւ պատկերասփրւուն
ելոյն կրնանք ունենալ:


Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՁԵՎԴԻՍԿՈՎԱ
Առաջնորդ

Արքային

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅԻ ԵԿԵՂԵՑԻ
Գլխավոր, Օհայո



REV. FR. DIRAN PAPAZIAN
PASTOR

Area Code 216—Tel. 381-6590

ST. GREGORY OF NAREK
ARMENIAN CHURCH

666 Richmond Road
Cleveland, Ohio 44143. U.S.A.

23 Փետր. 84

Առաջնորդության Քահանյան Ազգային համայնքի Առաջնորդ Առաջնորդ ՀԱՐՑ

Առ և ՆԿԱՏՈՒԹՅՈՒՆ Առաջնորդ ՄՐԱՎԱՆԻՆ ՀՕՐ

Առաջնորդ Սրբազնն Հօր Քլիվլենտ այցելութեան ժամանակացոյցի պատրաստութեան միջնորդին կարգ մը հարցեր ծագեցան զորս ստորեւ յիշատակած ենք, որպէս զի յարմար առիթով մը, յետազային ունենանք Առաջնորդ Սրբազնն Հօր տալիք ուղղութիւնը կամ թելազրութիւնները անոնց վերաբերեամբ:

1.- Ուրբաթ, 13 Ապրիլ

- Տրուած ըլլալով որ Մեծ Պահքի օր է եւ Կերակուրի Համար մսեղէնէ Հրաժարելու ենք, արդեօք փոխարէն ձկնեղէն կարելի է թոյլատրել:

2.- Եարաթ, 14 Ապրիլ

- Տրուած ըլլալով որ Նաւակատիքի օր է Եարաթ օրը, արդեօք մսեղէնը թոյլատրելի է այդ օրը թէ ոչ:

3.- Կիրակի, 15 Ապրիլ

- Մազկազարդի օրէն: Պատարագի ընթացքին Ս. Հաղորդութիւն պիտի մատակարարուի եկեղեցւոյս մէջ:
- Ճաշկերոյթին մսեղէնը թոյլատրելի, է. գոնէ կրնանք՝ թոշնազգի (Հաւեղէն) ունենալ:

4.- Տրամադիր է Ճայնասփիւրի եւ կամ պատկերասփիւրի վրայ ելոյթ ունենալ եթէ կարելի ԾԼԱՅ կարգազրութիւն մը ընել:

Առ այժմ ասոնք եկան մեր միտքը որոնց մասին կը Փափաքինք լուսաբանուեմ թիւն մը ունենալ: Եթէ Սրբազնը աւել ցնելի քաներ մը ունի իբրեւ յաւելեալ թելազրանք իր այցելութեան կապակցութեամբ, կը յուսանք որ այդ մասին յիշեցում ԾԼԱՅ մեզի ի յառաջազունէ:

Հանդերձ շնորհակալեօք (կանխայայտ)

Եւ խոնարհար
ՀԱ. Ա. Ա.
Տ. Տ. Ա. Ֆ. Փ.